ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Կապան համայնքի ճանապարհների, բակերի, մայթերի վերանորոգման
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/2

ք. Կապան «10» դեկտեմբեր 2020թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյան, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կապանի ՃՇՇ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արարատ Կարապետյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Կապան համայնքի ճանապարհների, բակերի, մայթերի վերանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ըստ Հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված

ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **372796758** (երեք հարյուր յոթանասուներկու միլիոն յոթ հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ, որից 62132793 (վաթսուներկու միլիոն մեկ հարյուր երեսուներկու հազար յոթ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

2-րդ չափաբաժին 175210758 (մեկ հարյուր յոթանասունհինգ միլիոն երկու հարյուր տաս հազար յոթ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ՝ որից 29201793 (քսանինը միլիոն երկու հարյուր մեկ հազար յոթ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

4-րդ չափաբաժին 197586000 (մեկ հարյուր իննսունյոթ միլիոն հինգ հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ՝ որից 32931000 (երեսուներկու միլիոն ինը հարյուր երեսունմեկ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Ընդ որում, դրամական միջոցների փոխանցումը կատարված աշխատանքների դիմաց կատարվում է հետևյալ կերպ՝

5.3.1 գումարի 40տոկոսը վճարվում է համայնքային բյուջեից.

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Կատարողի կողմից սկզբում հանձնման-ընդունման արձանագրությունը կազմվում և հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվում պայմանագրի գնի 40 տոկոսի չափով՝ նշելով համայնքային բյուջեի համապատասխան բյուջետային հաշվեհամարը՝ 900312512040՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն:

5.3.2 գումարի 60 տոկոսը վճարվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրի հիման վրա՝ պետական բյուջեից.

Կատարողի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունը կազմվում և հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվում պայմանագրի գնի 60 տոկոսի չափով՝ նշելով համայնքային բյուջեի համապատասխան բյուջետային հաշվեհամարը՝ 900312000491՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն:

Պատվիրատուի կողմից համայնքի մասնաբաժնով վճարում կատարվելուց հետո պայմանագրի, հանձնման-ընդունման արձանագրության, հաշիվ-ապրանքագրի և վճարային փաստաթղթերի սկանավորված տարբերակները ներկայացվում են ՀՀ Սյունիքի մարզպետարան: Մարզպետարանի կողմից փաստաթղթերը համապատասխան մարմիններ ներկայացվելուց և հաստատվելուց հետո միայն պետական բյուջեից հատկացվում են ֆինանսական միջոցներ՝ փոխանցում կատարելով մարզպետարանին: Գումարը մարզպետարանի կողմից համայնքի բյուջետային հաշվին փոխանցվելուց հետո Գնորդի կողմից կատարվում է դրամական միջոցների փոխանցում Վաճառողին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասները այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[31] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի համայնքապետարան	<<Կապանի ՃՇՇ>> ՍՊԸ
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա	Ք. Կապան, Գործարանային 53
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ
ՀՀ 900312512040 /40%, համայնք/	ՀՀ 1930037369910100
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/	ՀՎՀՀ 09402057
ՀՎՀՀ 09426088	
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
10 օգոստոս 2020 թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/2 *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կապան համայնքի ճանապարհների, բակերի, մայթերի վերանորոգման

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Չափաբաժին 2

Կապան համայնքի գ.Արծվանիկ 2-րդ փողոցի հիմնանորոգման աշխատանքներ					
NN	Աշխատանքների անվանումը	Չափ.	Ծավալը	Միավորի գինը	Գումարը
1	2	3	4		
	I.Ճանապարհային հագուստ				43874.214
1	Հողային պաստառի քանդում h=20սմ էքսկ. 0.65մ^3 շեր. տար. , բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 1.0 կմ	մ^3	348.6	2.400	836.640
2	Նույնը ձեռքի աշխատանքով, կողալցումով , հետագայում կողնակների լիցքի համար	մ^3	22.67	2.200	49.874
3	Հողային պաստառի քանդում բուլդոզերով, տեղափոխում մինչև 20մ կուտակումով , էքսկ. 0.65մ3 շեր. տար. , բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 1.0 կմ	մ^3	208.37	2.400	500.088
4	Ավազակոպճային շերտի տեղադրում h=5սմ	մ^2	2898.2	0.300	869.460
5	Խճային հիմքի տեղադրում h=15 սմ ,բիտումի 4.12տ/1000մ^2 տարածումով	մ^2	2898.2	3.500	10143.700
6	Խոշորահատիկ ա/բ շերտի տեղադրում h=6սմ	մ^2	2898.2	6.260	18142.732
7	Մանրահատիկ ա/բ շերտի տեղադրում h=4սմ	մ^2	2898.2	4.600	13331.720
	II.Մուտքեր				3270.377
1	10eIV բնահողի քանդում էքսկ. 0.65մ3 շեր. տար. , բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 1.0 կմ	մ^3	24.32	2.400	58.368
2	Նույնը ձեռքի աշխատանքով, էքսկ. 0.65մ3 շեր. տար. բարձում ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 1.0 կմ	մ^3	2.7	2.610	7.047
3	Հողային պաստառի հարթեցում ձեռքի աշխատանքով	մ^2	386.14	0.150	57.921
4	Խճային հիմքի տեղադրում h=12սմ,բիտումի 4.12տ/1000մ2 տարածումով	մ^2	386.14	3.550	1370.797
5	Մանրահատիկ ա/բ շերտի տեղադրում h=4սմ	մ^2	386.14	4.600	1776.244
	III.Մայթեր				858.997
1	Բազալտե 15x30սմ եզրաքարերի համար խրամուղու քանդում ձեռքի աշխատանքով , բարձում էքսկ. ա/ինքն. , տեղափոխում լցակույտ 1.0 կմ	մ^3	1.23	2.900	3.567
2	Բազալտե 15x30սմ եզրաքարերի տեղադրում , բետոնե B15 հիմքի վրա 100գծ.մ-3,5մ^3	գծ.մ	33.0	12.370	408.210
3	Բազալտե 10x20սմ եզրաքարերի տեղադրում , բետոնե B15 հիմքի վրա 100գծ.մ-3,0մ^3	գծ.մ	20.0	8.930	178.600
4	Ավազակոպճային հիմքի իրականացում h=12սմ	մ^2	60.5	0.650	39.325
5	Ավազային ա/բ ծածկ h=3սմ	մ^2	60.5	3.790	229.295
	IV.Կողնակներ				244.836

1	Նախօրոք կուտակված 10elV բնահողի փոռում և հարթեցում ձեռքի աշխատանքով,	$մ^3$	22.7	4.800	108.816
2	Կողնակների ամրացում ավազակոպիճով h=5սմ	$մ^2$	453.4	0.300	136.020
Կապան քաղաքի Ազատամարտիկների փողոցից Բաղաբուրջի հուշահամալիր տանող ճանապարհի ասֆալտապատում					
NN	Աշխատանքների անվանումը	Չափ.	Ծավալը	Միավորի գինը	Գումարը
1	2	3	4		
	I Հողային աշխատանքներ				2079.146
1	Քայքայված ա/բ ծածկի քանդում էքս. 0.65 $մ^3$ շ. տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 11.0կմ միջին հեռ.	$մ^3$	92	3.400	312.800
2	Հողային պաստառի քանդում (10elV կարգի բնահող) էքսկ. 0.65$մ^3$ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 11 կմ	$մ^3$	367	2.950	1082.650
3	Հողային պաստառի քանդում (10elV կարգի բնահող) ձեռքով, բարձում էքսկ. 0.65$մ^3$ շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 11 կմ	$մ^3$	32.44	3.400	110.296
4	10elV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ, բարձում էքսկ. 0.65$մ^3$ շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 11 կմ	$մ^3$	152.5	3.760	573.400
	II Երթևեկային մաս				28185.736
1	Մանրահատիկ ա/բ h=4 սմ	$մ^2$	1839.8	4.750	8739.050
2	Խոշորահատիկ ա/բ h=6 սմ	$մ^2$	1839.8	6.420	11811.516
3	Խճային հիմքի տեղադրում h=15 սմ բիտումի 4.12տ/1000$մ^2$ տարածումով	$մ^2$	1839.8	3.590	6604.882
4	Ավազակոպճային շերտ h=10 սմ	$մ^2$	1839.8	0.560	1030.288
	III Պատի ամրացման տեղամասի աշխատանքներ				1719,202
1	Մայթի հավաքովի ե/բ քանդված բլոկների կազմատում և բարձում ա/ի ձեռքով և տեղափոխում լցակույտ 11 կմ հեռավորության վրա:	$մ^3$	4	5.780	23.120
2	Փլված տեղամասերում 10elV գրունտի բարձում ա/ի ձեռքով և տեղափոխում լցակույտ 11 կմ հեռավորության վրա:	$մ^3$	3,0	4.686	14,058
3	Շապիկի հատվածում գրունտի համահարթեցման հողային աշխատանքներ ձեռքով:	$մ^2$	3.2	0.140	0.448
4	Պատի վրա խարսխային ձողեր տեղադրելու համար անցքերի գայլիկոնում- d40մմ, L_1=25 սմ (հորիզոնական):	հատ	31	0.690	21.390
5	Պատի վրա ամրանային խարիսխների տեղադրում &16 A500c , L_1=40 սմ: Էպոքսիդացեմենտային շաղախ - 0.0082 $մ^3$:	տ	0.0196	780.000	15.288
6	Պատի ,շապիկիե տակ ավազակոպճային շերտի տեղադրում - h=10 սմ:	$մ^3$	0.32	5.600	1.792
7	Պատի վերնամասերի լրալցման միաձույլ բետոն B20 դասի:	$մ^3$	0.72	72.200	51.984
8	Պատի ուժեղացման ,շապիկիե և աճեցման միաձույլ ամրանավորված բետոն B20 - L=16 մ: Ամրան - &10 A500c - 233.34 կգ:	$մ^3$	9.60	115.410	1107.936
9	Պատին հարակից տեղամասերում բազալտե եզրաքարերի հիմքի փորման հողային աշխատանքներ ձեռքով: Բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 11 կմ	$մ^3$	0.35	2.160	0.756

	հեռավորության վրա:				
10	Բազալտե եզրաքարերի տեղադրում պատի և նրան հարակից տեղամասերում՝ բետոնե հիմքով, չափ. 15x30 սմ:	գմ	39.0	12.370	482.430

Կապան քաղաքի Հուշահամալիրից Բաղաբուրջ թաղամաս տանող ճանապարհի հիմնանորոգում

NN	Աշխատանքների անվանումը	Չափ.	Ծավալը	Միավորի գինը	Գումարը
	I.Նախապատրաստական աշխատանքներ				646.980
1	Թփուտների կտրում ճանապարհի երկայնքով (նոսր քանակությամբ)	$մ^2$	300	0.640	192.000
2	Հավաքովի բետոնյա եզրաքարերի (15x30սմ) քանդում բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 12 կմ	գծմ	200	1.790	358.000
3	Միաձույլ բետոնյա վաքերի քանդում - 130 գծմ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 12 կմ	$մ^3$	13	7.460	96.980
	II Հողային աշխատանքներ				3593.898
1	Ա/բ ծածկի քանդում էքսկ. 0,65 $մ^3$ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 12 կմ	$մ^3$	326.2	3.530	1151.486
2	Նստվածքային տեղամասում հանույթի իրականացում (10eIV կարգի բնահող) էքսկ. 0.65$մ^3$ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 12 կմ	$մ^3$	366.3	3.430	1256.409
3	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) էքսկ. 0.65մ3 շ.տ. բարձում ա/ի տեղափոխում 1 կմ միջին հեռավորությամբ լիցք (հարթում, ջրում, խտացում)	$մ^3$	175	2.390	418.250
4	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) ձեռքի աշխատանքով, բարձում էքսկ. 0.65մ3 շ.տ. ա/ի տեղափոխում 1 կմ միջին հեռավորությամբ լիցք (հարթում, ջրում, խտացում)	$մ^3$	10.4	3.580	37.232
5	10eIV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ միջին հեռավորությամբ լիցք (հարթում, ջրում, խտացում)	$մ^3$	459.9	0.550	252.945
6	Պահուստային բնահողի բարձում էքսկ. 1.25 $մ^3$ շ.տ. ա/ի տեղափոխում 7 կմ հեռավորությամբ լիցք (հարթում, ջրում, խտացում)	$մ^3$	180.9	2.640	477.576
	III Կողնակներ և կողային առուներ				1424.440
1	Կողնակների ամրացում ավազակոպիճով $h_{միջ.}$=5 սմ	$մ^2$	1813.2	0.300	543.960
2	Կողային առուների իրականացում 10e IV բնահողում 0.65 $մ^3$ շ.տ., էքսկ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 12.0 կմ	$մ^3$	140	5.470	765.800
3	Կողային առուների իրականացում 10e IV բնահողում ձեռքի աշխատանքով բարձում 0.65 $մ^3$ շ.տ., էքսկ. ա/ի և տեղափոխում լցակույտ 12.0 կմ	$մ^3$	18.8	6.100	114.680
	IV Երթևեկային մաս				65314.249
1	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10 սմ	$մ^2$	6524.9	0.570	3719.193
2	Խճային հիմքի տեղադրում h=15 սմ բիտումի 4.12տ/1000$մ^2$ տարածումով	$մ^2$	6524.9	3.590	23424.391
3	Մանրահատիկ ա/բ h=5 սմ	$մ^2$	6524.9	5.850	38170.665
	V Իջատեղեր և մուտքեր				4615.014
1	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) բուլդոզերով տեղափոխում մինչև 10մ, բարձում էքս. 0.65$մ^3$ շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 12 կմ	$մ^3$	73	3.280	239.440

2	Հողային պաստառի քանդում (10elV կարգի բնահող) ձեռքի աշխատանքով բարձում էքս. 0.65մ3 շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 12 կմ	մ^3	6	2.890	17.340
3	Հողային պաստառի հարթեցում բուլդոզերով	մ^2	464.7	0.110	51.117
4	Խճային հիմքի տեղադրում h=12 սմ բիտումի 4.12տ/1000մ^2 տարածումով	մ^2	395.95	3.280	1298.716
	Խճային հիմքի տեղադրում h=12 սմ	մ^2	68.75	1.100	75.625
5	Մանրահատիկ ա/բ h=5 սմ	մ^2	464.7	5.560	2583.732
6	10elV բնահողի քանդում էքս. 0,65մ^3 շ.տ. կողքի կուտակումով (խողովակների փոսորակներ)	մ^3	1	1.730	1.730
7	10elV բնահողի քանդում ձեռքով, կողքի կուտակում (խողովակների փոսորակներ)	մ^3	0.45	5.000	2.250
8	Մետ. d=325 մմ խողովակի տեղադրում (d=5մմ)	գծմ	6.6	44.870	296.142
9	Միաձույլ բետոնե գլխամաս B-20	մ^3	0.262	116.000	30.392
10	Գլխամասերի ջրամեկուսացում	մ^2	2.14	1.200	2.568
11	Մետ. d=325 մմ խողովակի ջրամեկուսացում	գծմ	6	1.925	11.550
12	Ավազակոպճային շերտ h=10սմ (խողովակների տակ)	մ^3	0.26	6.100	1.586
13	Հետադարձ լիցք	մ^3	0.9	1.710	1.539
14	Ավելորդ բնահողի բարձում էքս. 0,65մ^3 շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 12կմ	մ^3	0.55	2.340	1.287
	VI Վաքեր				6784.110
1	Ավազակոպճային շերտ h=10սմ (վաքերի տակ)	մ^3	21.5	0.560	12.040
2	Б-1-20-50 վաքերի ջրամեկուսացում	մ^2	408.5	1.220	498.370
3	Б-1-20-50 վաքերի տեղադրում	մ^3	43	145.900	6273.700
	VII Մ530 Խողովակի նորոգում Կմ 0+594-ում				158.648
1	Գլխամասի կառուցման համար փոսորակի փորում ձեռքով 10elV գրունտում կողքի գցումով:	մ^3	1.43	5.000	7.150
2	Ավազակոպճային նախապ. h=10սմ	մ^3	0.08	0.600	0.048
3	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20 F100	մ^3	1.3	116.500	151.450
	VIII Մ530 Խողովակների տեղադրում Կմ 0+191 և 0+428-ում				3015.162
1	Ելքում հունի ուղղման հողային աշխատանքներ ձեռքով կողքի գցումով - (10elV)	մ^3	1.3	5.000	6.500
2	Հող. աշխատանքներ (10elV) խողովակի փոսորակների փորման համար էքս. 0.65 մ^3 շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 12կմ միջ. հեռ. վրա	մ^3	5.7	3.430	19.551
3	Հող. Աշխատանքներ (10elV) խողովակի փոսորակների փորման համար էքս. 0.65 մ^3 կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ^3	19.3	1.730	33.389
4	Ավազակոպճային նախապ. h=10սմ	մ^3	0.93	0.600	0.558
5	Խճային հիմք h=20սմ	մ^3	7.72	7.700	59.444
6	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20 F100	մ^3	5.35	116.500	623.275
7	Վաքերի և հենակային ատամների միաձույլ բետոն B20 դասի	մ^3	1.45	72.200	104.690
8	Մետաղական ժարտ=530մմ խողովակի տեղադրում 1գծմ=90,3 կգ, պատի հաստ. 7մմ	գմ	20	104.370	2087.400
9	Որմնակապային ամրաններ Մ16 A500c l=40սմ	կգ	10.1	0.780	7.878

10	Խողովակի քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով (d=530մմ)	գծմ	18.3	2.980	54.534
11	Բետոնի քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով	մ^2	9.12	1.250	11.400
12	Հետադարձ լիցք (10eIV) բուլդոզերով	մ^3	18	0.240	4.320
13	Հետադարձ լիցք (10eIV) ձեռքով	մ^3	1.3	1.710	2.223
	IX Պարապետ (L=6 գծմ)				89.699
1	10e IV բնահողի մշակում ձեռքով, բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 12 կմ	մ^3	1.1	3.430	3.773
2	10e IV բնահողի մշակում ձեռքով կողքի կուտակումով	մ^3	0.6	5.000	3.000
3	Ավազակոպճային փոռող շերտ h=5սմ	մ^3	0.2	0.570	0.114
4	Հիմքի կառուցում խամքարով (ցեմենտային շաղախով)	մ^3	0.96	16.300	15.648
5	Իրանի կառուցում խամքարով (ցեմենտային շաղախով)	մ^3	1.44	23.000	33.120
6	Պարապետի սվաղ, 3սմ	մ^2	5.73	3.400	19.482
7	Պարապետի ներկում	մ^2	5.73	0.800	4.584
8	Ամրան Ի22 մմ A 500C	կգ	8.952	1.000	8.952
9	Հետլիցքի ձեռքով	մ^3	0.6	1.710	1.026
	X Կահավորում				9336.050
1	Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում	գծմ	376	24.435	9187.560
2	Նոր ազդանշանային C1 տիպի պլաստիկ սյուների տեղադրում	հատ	31	4.790	148.490
	Ընդամենը՝ներառյալ շահույթը, վերադիր ծախսերը և ԱԱՀ (հազար ՀՀ դրամ)				175210.758

Չափաբաժին 4

NN	Աշխատանքների անվանումը	Չափ.	Ծավալը	Միավորի գինը	Գումար
1	2	3	4	5	6
	I Նախապատրաստական աշխատանքներ				17318.666
1	Հիմնական ճանապարհի ա/բ ծածկի քանդում ձեռքով, բարձում էքսկ. 0.65մ^3 շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 15 կմ	մ^3	143.9	4.700	676.330
2	Հիմնական ճանապարհի բազալտե սալիկների քանդում ձեռքով, վերադարձ սեփականատիրոջը	մ^3	96	5.780	554.880
3	Հիմնական ճանապարհի պաստառի քանդում (10eIV բնահող) էքս. 0.65մ^3 շ. տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 15.0կմ միջին հեռ.	մ^3	740	3.860	2856.400
4	Հիմնական ճանապարհի պաստառի քանդում (10eIV բնահող) ձեռքով, բարձում էքսկ. 0.65մ^3 շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 15 կմ	մ^3	27.4	4.700	128.780
5	Բակի քայքայված ծածկի (h$_{միջ}$=25սմ) քանդում էքս. 0.65մ^3 շ. տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 15.0կմ միջին հեռ.	մ^3	2400	3.860	9264.000
6	Բակի քայքայված ծածկի քանդում ձեռքով, բարձում էքսկ. 0.65մ^3 շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 15 կմ	մ^3	326	4.700	1532.200
7	Մայթի քայքայված տեղամասի քանդում (h$_{միջ}$=15սմ) էքս. 0.65 մ^3 շ. տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 15.0կմ միջին հեռ.	մ^3	75	4.700	352.500
8	Մայթի քայքայված ծածկի քանդում (h$_{միջ}$=15սմ) ձեռքի աշխատանքով, բարձում էքս. 0.65 մ^3 շ. տ. ա/ի տեղափոխում լցակույտ 15.0կմ միջին հեռ.	մ^3	33.78	4.700	158.766

9	Գոյություն ունեցող եզրաքարերի (15x30սմ) քանդում ձեռքի աշխատանքով, վերադարձ սեփականատիրոջը	գծմ	143	1.470	210.210
10	Գոյություն ունեցող եզրաքարերի (15x30սմ) քանդում ձեռքի աշխատանքով, բարձում էքս. 0.65 մ^3 շ. տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 15.0կմ միջին հեռ.	գծմ	570	2.780	1584.600
	II Երթևեկային մաս				148605.072
1	Մանրահատիկ ա/բ h=5 սմ	մ^2	10904.1	5.870	64007.067
2	Մանրահատիկ ա/բ h=4 սմ	մ^2	2877.9	4.630	13324.677
3	Խոշորահատիկ ա/բ h=6 սմ	մ^2	2877.9	6.260	18015.654
4	Խճային հիմքի տեղադրում h=15 սմ բիտումի 4.12տ/1000մ^2 տարածումով	մ^2	13782	3.510	48374.820
5	Ավազակոպճային շերտ h=10 սմ	մ^2	2877.9	0.560	1611.624
6	Ավազակոպճային շերտ $h_{միջ}$=5 սմ	մ^2	10904.1	0.300	3271.230
	III Մայթեր				17019.413
1	Բազալտե 15x30 եզրաքարերի տեղադրում բետոնյա հիմքի վրա (B-15), բետոն 1գծմ - 0.035մ^3	գծ.մ	794.8	12.370	9831.676
2	Միաձույլ բետոնե եզրաշարի կառուցում 15x30 (B-20)	մ^3	7.92	72.100	571.032
3	Ավազակոպճային հիմքի իրականացում h=12սմ	մ^2	1486.9	0.660	981.354
4	Ավազային ա/բ h=3սմ	մ^2	1486.9	3.790	5635.351
	IV Դիտահորեր				1738.542
1	Դիտահորերի ոչ պիտանի բետոնյա սալերի ապամոնտաժում, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 15.0կմ միջին հեռ. (գոյություն ունեցող 39 հատ թուջե կափարիչները պահպանվում են հետագա օգտագործման համար)	հատ	39	5.278	205.842
2	Դիտահորի նոր սալերի տեղադրում (1,2x1,2), հին թուջե կափարիչների օգտագործումով	հատ	39	39.300	1532.700
	V Ջրընդունիչներ (L=26մ)				3425.744
1	10eIV կարգի բնահողի քանդում ձեռքի աշխատանքով, խրամուղու կառուցում կողքի կուտակումով	մ^3	19.76	0.750	14.820
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ^3	2.44	6.100	14.884
4	Միաձույլ ե/բ ջրընդունիչ վաք բետոն B-20 ամրան & 14մմ A500c - 215.28գծմ/260.06կգ	մ^3	9.05	134.400	1216.320
5	Քսվածքային ջրամեկուսացում	մ^2	31.2	1.230	38.376
6	Ցանցի իրականացում ամրան & 25մմ A500c - 149.76 գծմ/577.03կգ Անկյունակ L 100x10մմ - 52 գծմ/785.2կգ Անկյունակ L 90x9մմ - 79.04 գծմ/964.29կգ	տ	2.32652	900.000	2093.868
7	Հետլիցք ձեռքով	մ^3	4.16	1.700	7.072
8	Ավելացված բնահողի բարձում էքսկ. 0.65մ^3 շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 15 կմ	մ^3	15.6	2.590	40.404
	VI Պարապետներ (L=6.0մ)				335.580
1	Պարապետի հիմքի խրամուղու քանդում ձեռքով, բարձում էքսկ. 0.65մ^3 շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 15 կմ - 10^{e}IV:	մ^3	1.9	0.750	1.425
2	Հիմքի և իրանի միջև ամրանային խարիսխների տեղադրում &20A500c , L_1=80 սմ:	տ	0.0079	900.000	7.110
3	Պարապետի հիմքի իրականացում B20 դասի միաձույլ բետոնով:	մ^3	1.51	59.700	90.147

4	Պարապետի իրանի իրականացում B20 դասի միաձույլ բետոնով:	մ^3	1.92	101.800	195.456
5	Հիմքի երկշերտ ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով:	մ^2	6.6	1.290	8.514
6	Պարապետների երեսային մակերևույթների սվաղ M200 մակնիշի ցեմ. շաղախով, b=3 սմ:	մ^2	7.84	3.400	26.656
7	Պարապետների ներկում:	մ^2	7.84	0.800	6.272
	VII Հենապատի կառուցում				4285.226
1	Հենապատի փոսորակի քանդում և բարձում էքսկ. 0.65մ^3 շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 15 կմ - 10^{e}IV:	մ^3	94.6	3.860	365.156
2	Հենապատի փոսորակի քանդում էքսկ. 0.65մ^3 շ.տ. ա/ի տեղում կույտավորումով հետլիցքի համար:	մ^3	60.0	1.910	114.600
3	Նույնը՝ ձեռքով:	մ^3	4.0	5.000	20.000
4	Փոսորակի համահարթեցում ձեռքով:	մ^2	28.8	0.350	10.080
5	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10սմ:	մ^3	2.9	0.560	1.624
6	Հենապատի հիմքի միաձույլ ե/բ: Ամրան - Մ16A500c P=1318.8 կգ:	մ^3	11.52	113.000	1301.760
7	Հենապատի իրանի միաձույլ ե/բ: Ամրան - Մ16A500c P=1363.94 կգ, Մ8A240 P=22.08 կգ,	մ^3	16.2	139.600	2261.520
8	Բազրիքների ամրացման համար ներդիր մասերի պատրաստում և տեղադրում՝ -12x150 L=220մմ, P_1=3.1 կգ; Խարիսխներ Մ14 A500c, n=2 հատ. L_1=682 մմ, P_1=1.65 կգ:	հատ	24	3.470	83.280
9	Գրունտի հետ շփվող մակերևույթների երկշերտ ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով:	մ^2	72.2	1.230	88.806
10	Կուտակված գրունտով հետլիցք բուլդոզերով (ջրումով և խտացումով):	մ^3	64.0	0.600	38.400
	VIII Հենապատի նորոգում				215.849
1	Գոյություն ունեցող պատի քանդված տեղամասերի լրալցում B20 դասի միաձույլ բետոնով: V=1.6x0.4x0.4, 0.8x0.5x0.4	մ^3	0.42	72.100	30.282
2	Գոյություն ունեցող պատի վերին հատվածի կիսաքանդված տեղամասի կազմատում ձեռքով պնևմագործիքի օգտագործումով և տեղափոխում լցակույտ 15 կմ հեռավորության վրա: V=5x0.3x0.3:	մ^3	0.45	4.600	2.070
3	Միաձույլ B20 դասի բետոնից գոտու իրականացում ներդիր մասերի նախնական տեղադրումով:	մ^3	0.576	132.000	76.032
4	Բազրիքների ամրացման համար ներդիր մասերի պատրաստում և տեղադրում՝ -12x150 L=220մմ, P_1=3.1 կգ; Խարիսխներ Մ14 A500c, n=2 հատ. L_1=682 մմ, P_1=1.65 կգ:	տ	0.0336	900.000	30.240
5	N7 շենքի ճակատի պատի վերանորոգում M200 մակնիշի ցեմ. շաղախով b=5 սմ: Ամրանային ցանց - Մ3 (100x100):	մ^2	9.7	7.250	70.325
6	Պատի քանդում ձեռքով պնևմագործիքի օգտագործումով և տեղափոխում լցակույտ 15 կմ հեռավորության վրա:	մ^3	1.5	4.600	6.900
	IX Խողովակի կառուցում				357.372
1	Խողովակի տեղադրման համար փոսորակի քանդում և բարձում էքսկ. 0.65մ3 շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 15կմ - 10eIV:	մ^3	2.0	20.001	40.002
2	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10սմ:	մ^3	0.84	6.000	5.040

3	Մետ. d=273 մմ խողովակի տեղադրում (d=5մմ):	գծմ	13	21.000	273.000
4	Մետ. d=273 մմ խողովակի ջրամեկուսացում:	գծմ	12.6	3.000	37.800
5	Խողովակի և ջրընդունիչների միացման միաձույլ բետոն:	$մ^3$	0.018	85.000	1.530
	X Աստիճանի կառուցում				317.446
1	Աստիճանի փոսորակի քանդում և բարձում էքսկ. 0.65$մ^3$ շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 15 կմ - 10elV:	$մ^3$	4.6	2.030	9.338
2	Փոսորակի համահարթեցում ձեռքով:	$մ^2$	3.2	0.350	1.120
3	Խճային շերտի տեղադրում:	$մ^3$	0.3	7.800	2.340
4	Աստիճանի միաձույլ բետոն - B20 դասի:	$մ^3$	2.14	88.000	188.320
5	Գրունտի հետ շփվող մակերևույթների երկշերտ ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով:	$մ^2$	1.95	1.200	2.340
6	Աստիճանի կողային մակերևեույթի երեսապատում բազալտով b=3սմ:	$մ^2$	1.95	17.700	34.515
7	Աստիճանների երեսապատում բազալտով b=3սմ:	$մ^2$	4.49	17.700	79.473
	XI Բազրիքներ				3967.090
1	Գոյություն բազրիքների ապամոնտաժում վերադարձ սեփականատիրոջը:	տ	0.322	120.000	38.640
2	Գոյություն ունեցող հենապատերի վրա խարսխային ձողեր տեղադրելու համար ուղղահայած անցքերի գայլիկոնում- d25մմ, L_1=22 սմ:	հատ	256	0.600	153.600
3	Գոյություն ունեցող հենապատերի վրա ամրանային խարիսխների տեղադրում &14 A500c, n=4 հատ. L_1=230 մմ, P_1=1.11 կգ: -12x150 L=220մմ, P_1=3.1 կգ; էպոքսիդացեմենտային շաղախ - 0.019 $մ^3$:	տ	1.075	790.000	849.250
4	Նոր պողպատե բազրիքների տեղադրում՝ նախնական ներկաստառումով և ներկումով: Ուղղանկյուն խողովակ 50x30x2.5, L=564.5 մ, 40x30x2.5, L=795.53 մ, 40x20x2.5, L=31.68 մ:	տ	3.645	790.000	2879.550
5	Գոյություն ունեցող բազրիքների երկշերտ ներկում:	$մ^2$	61.4	0.750	46.050
	Ընդամենը՝ներառյալ շահույթը, վերադիր ծախսերը և ԱԱՀ (հազար ՀՀ դրամ)				197586.000

Աշխատանքներն իրականացվում են կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերին համաձայն, բարձր որակով, աշխատանքի ընթացքում հաշվի են առնվում լաբորատոր փորձարկումները,
Կապալառուն աշխատանքները կատարում է Կապան համայնքի ըստ ծավալաթերթում նշված հասցեների:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կապանի համայնքապետարան
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040 /40%, համայնք/
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Կապանի ՃՇՇ>> ՍՊԸ
Ք. Կապան, Գործարանային 53
<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ
ՀՀ 1930037369910100
ՀՎՀՀ 09402057

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 10 դեկտեմբեր 2020 թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/2 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Կապան համայնքի ճանապարհների, բակերի, մայթերի վերանորոգման ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
2	**Արծվանիկ բնակավայրի 2-րդ փողոցի, Ազատամարտիկների փողոցից Բաղաբուրջի հուշահամալիր տանող ճանապարհ-հուշահամալիրից Բաղաբուրջ թաղամաս տանող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ**	Պայմանագրի կնքման օր	2020թ. Դեկտեմբերի 25
4	**Բաղաբերդ թաղամասի թիվ 6, 7, 8, 9, 10, 12 շենքերի բակերի նորոգման աշխատանքներ**	Պայմանագրի կնքման օր	2020թ. Դեկտեմբերի 25
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման օր	2020թ. Դեկտեմբերի 25

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կապանի համայնքապետարան
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040 /40%, հպմայնք/
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Կապանի ՃՇՇ>> ՍՊԸ
Ք. Կապան, Գործարանային 53
<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ
ՀՀ 1930037369910100
ՀՎՀՀ 09402057

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 10 » օգոստոսի 2020 թ. կնքված
***ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/2** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը, հաշվեհամար, գումար			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
					օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45231177-2	**Արծվանիկ բնակավայրի 2-րդ փողոցի, Ազատամարտիկների փողոցից Բաղաբուրջի հուշահամալիր տանող ճանապարհ-հուշահամալիրից Բաղաբուրջ թաղամաս տանող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ**	900312512040	175210758	70084303.2	70084303.2	70084303.2	70084303.2	70084303.2	70084303.2
			900312000491		105126454.8	105126454.8	105126454.8	105126454.8	105126454.8	105126454.8
4	45231177-4	**Բաղաբերդ թաղամասի թիվ 6, 7, 8, 9, 10, 12 շենքերի բակերի նորոգման աշխատանքներ**	900312512040	197586000	79034400	79034400	79034400	79034400	79034400	79034400
			900312000491		118551600	118551600	118551600	118551600	118551600	118551600

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կապանի համայնքապետարան
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040 /40%, համայնք/
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Կապանի ՃՇՇ>> ՍՊԸ
Ք. Կապան, Գործարանային 53
<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ
ՀՀ 1930037369910100
ՀՎՀՀ 09402057

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 10 օգոստոս 2020 թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«10 օգոստոսի 2020 թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/2 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն